սովորաբար կը փոխուին ի-ի, թէ՛ հոլովուած, թէ՛ ածանցուած և թէ բարդուած ժամանակ. օրինակ՝ վրիժառու, միգի, աղուիսու, պարտիզաց, գիտուն, և այլն։ Ասով կանոնին բացառութիւն չեն կազմեր պատահաբար։

Կայ սակայն ստուար մաս մը այս բառերուն մէջ՝ որոնք բարդութեան կամ հոլովելու ժամանակ իրենց է տառը կը փոխեն ե-ի. այսպէս՝ աղուէս, աղուիսու, բայց աւելի հարազատ՝ աղուեսու. նմանապէս եղէգն, եղեգան, եղեգնիկ, եղեգնափող, և այլն. գմբէթ, գմբեթ, գմբեթարդ. զէնընկեց, քարընկեցութիւն, պատճենի, պարենաւոր, ախտաժետ, որովայնամետութիւն, ախտամետութիւն, որկորամետութիւն, անտերունչ, ընչաւետանալ, ծաղկաւետիլ, շահաւետիլ, աշխետաձի, խայտաբղետութիւն, կետադրութիւն, քերթեշիկ, քեշակարկատ, թեական, տուեցենային, յաւեժական, կոճկենիկ, գրեթէ, թեպետ, խեթահար, շեզ, շեզու, շիզել, պուետ, պուետես, և այլն, և այլն։

Այս փոփոխութիւնն եղած է դիտմամբ և ոչ պատահաբար. և ասոր ներքին պատճառն ալ վերի կանոնը միայն կրնայ լինել և ոչ ուրիշ բան. ինչպէս որ նոյն այս պատճառէն դրդուելով դեւ կը գրուի և ոչ դէւ. ձեւ՝ որ կը հետեւի դիւական, դիւահար, և այլն, բարդերէն և դիւի, դիւաց հոլովներէն։

Վերջընթեր է ունեցող բառերը բարդութեան մէջ կրնան մնալ նաեւ է-ով, և ասով կը կազմեն բացառութիւններու թիւ մը, եթէ պէտք է իրօք բացառութիւն համարել ասոնք։ Սակայն սա կը պատահի խիստ քիչ անգամ և աւելի յետնաբար։

Այստեղ հաւաքուած են Ա-Յ-Ն-ի մէջ յիշուած սոյն կարգի բառերը.

1°. Օրէնդիր, վրէժխնդիր, տէզընկեց, դէտակն, այդրէնածին, դէմակալք՝ մորիկ ընողներու բազմութիւն, քէնահատոյց, տէրութիւն, տէրունական, և այլն (կայ նաեւ տերունի)։

2°. Ճէրասաց, աղէջկտակ, սէրոնսիրտ՝ պաղուկ քամի սիրտ զովացնող։

Այս երեք տեսակ փոփոխութիւններուն մէջ (ի, ե, է) յայտնի է թէ նոր, վերլուծական լեզուներու ոգին անյարմար են առաջին երկու փոփոխութիւնները. ուստի և բանաւոր է գործածել միայն վերջինը. և գրել վրէժի, ամէնէն, աղէտալի, պատճէնաւոր, և այլն, և այլն։

Ի-ով վերջացող բազմավանկ բառերը բարդութեան մէջ կը վերածուին ե-ի. որով դարձեալ բացառութիւն չեն կազմեր ընդհանուր կանոնին։ Սակայն յետին գրիչներ ունին նաեւ է-ով՝ որ յայտնի սխալ է. օրինակ՝ ողբէլալիք, խնճէհար, ալէկոծ, և այլն։

Է յանգող բառ մը բարդութեան մէջ ա յօդակապը կ՚առնայ, որով դարձեալ կանոնին բացառութիւն չկազմուիր. օրինակ՝ հրեայ, հրէ—, հրէական. երէաշատ, և այլն։

Սղուած ձեւ է կիւրակէմուտք՝ եթէ կիւրակի ձեւէն չ՚ծագիր։

Գրչագրի սխալ է է իբրեւ յօդակապ՝ փոխանակ ե-ի. օրինակ՝ թիկնէրեկին՝ վայելուչ կերպով ուսերը շարժելով քալուածք, աղէկարծ = յեղակարծ, թրէզած = բրաւոր, կանայէկան = կնոջական։ Այս բառերը լաւագոյն է գրել ե-ով։

Եբրայեցի կամ յոյն են ափողէլոն, կիրէլեոն, կիմէտէր, սալէքին, տեւթիէդես, սերսէրիմ, սոէքէրովն կամ սոիքէրովն, պէլզէպուղ, պէգասոս, իկոսաէդրոն, մաթէմատիկոս, ալէլու, որոնցմէ գործածական են միայն վերջին երկուքը. կանոնաւոր է գրել մաթեմատիկոս, ալելու՝ ինչպէս որ արդէն կան գրողներ։

Պերոզ, պերոզոտ, չերաս, թեշկ մշկոյ, հերայ, քեշակարկատ, թեպետ, գրեթէ, սեքարիփի (սերովբէ), վետ (իշխան), չեզոք կը գրուին նաեւ է-ով՝ պէրոզ, պէրոզոտ, չէրաս, թէշկ մշկոյ, հէրայ, քէշակարկատ, թէպէտ, գրէթէ, սէքարիփի, վէտ, չէզոք. կանոնաւոր է գրել միայն ե-ով։

Յաւերժ կը գրուի թէ ե-ով և թէ է-ով. ինչպէս կայ յաւէժ կամ յաւեժ. կանոնաւոր է գրել յաւէժ (է-ով) և յաւերժ (ե-ով) միայն։

Զուտ բացառութիւն են խանրէփար՝ բայս մը, աղէկատ, կէշկէշալ, քէնք՝ քած շուն, կատու, և պէշասպիկ։